

Կիպրոսի «Մելգոնեան Կրթ. Հաստատության» Գոյատեւումը Ապահովելու Համար
Դատական Գործողութիւնները կը Շարունակուին
Վերջին Ժամ-Կիպրոսի Դատարանը Հրամանագիրով Կ'արգիլէ Մելգոնեանը Փակելու
Կամ Վաճառելու Որեւէ Գործողութիւն Հ.Բ.Ը.Միութեան Կողմէ

Հ.Բ.Ը. Միութեան հարիւրամեայ լուսաւոր տարեգրութեանց մէջ սեւ էջ մը կ'արձանագրուի, երբ Կեդրոնական Վարչութեան որոշումով Յունիս 2005-ին վերջնականապէս կը փակուին Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան դռները, Սփիւռքահայ գալիք սերունդները գրկելով հայեցի դաստիարակութիւն եւ բարձրորակ ուսում ստանալու հնարաւորութենէն: Առաւել՝ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան փակումով՝ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը միակողմանիօրէն, կը բեկանէ «Մելգոնեան» կտակի վերաբերեալ այն «Համաձայնագիրը» որ Դեկտ. 28, 1925-ին Աղեքսանդրիոյ մէջ կնքուած էր Կարապետ Մելգոնեանի, Կ. Պոլսոյ Պատրիարքարանի եւ Հ.Բ.Ը. Միութեան միջեւ:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը, որպէս վերոյիշեալ «Համաձայնագիրը» ստորագրող իրաւասու կողմ յանձինս Ամէն. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի Պատրիարքի այս տարուան Յունուար 13-ին Հ.Բ.Ը. Միութեան դէմ բողոքագիր-Դատական Հայց ներկայացուց Լոս Անճելըսի Դաշնակցային Դատարանին մէջ, յատկապէս Կիպրոսի Մելգոնեան Կրթ. Հաստատութեան փակման կապակցութեամբ: Ապրիլ 15-ին, Դատաւոր Մանուէլ Լ. Ռիլլ մերժեց այս դատը, որ անհիմն որակուած էր Հ.Բ.Ը.Մ.ի փաստաբաններուն կողմէ: Ի դէպ, 81-ամեայ Դատաւոր Մանուէլ Լ. Ռիլլ, որուն գրասենեակը մօտն է Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Դատաւոր Տիգրան Թէվրիզեանի գրասենեակին, Դաշնակցային Դատարանի շէնքին մէջ, արդէն վատ համբաւ մը կը վայելէ իրաւաբաններու շրջանակներէն ներս: Ըստ CAL LAW, California's Legal News Service-ի՝ անոր արձակած վճիռները ընդհանրապէս կը շրջուին Վերաքննական Ատեանին կողմէ, 80% , համեմատութեամբ: Ահա թէ ինչու, Կ. Պոլսոյ Պատրիարքարանի հետ համախորհուրդ «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» կազմակերպութիւնը Ամէն. Տ. Մեսրոպ Պատրիարքին դատը պաշտպանելու համար, Մայիս 17, 2005-ին դիմած է, Միացեալ Նահանգներու վերաքննական Ատեանին (U.S. Court of Appeals for the 9th Circuit) Լոս Անճելըսի մէջ, Դատաւոր Մանուէլ Լ. Ռիլլի արձակած վճիռին կապակցութեամբ: Դատը վերապաշտպանելու գործողութիւնը կը շարունակուի:

Դատարան ներկայացուելիք թեր եւ դէմ ամփոփագրերը (Briefing) պէտք է որ լրացուին մինչեւ Նոյեմբեր, 2005.

Կիպրոսի մէջ արդէն Յունիս 2, 2005-ին սկսած է «Մելգոնեան»ի փակումը եւ վաճառումը արգիլելու դատական գործընթացը՝ ընդդէմ Հ.Բ.Ը. Միութեան:

Կ. Պոլսոյ Պատրիարք Ամէն. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի առաջնորդութեամբ եւ «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» կազմակերպութեան կարգադրութեամբ, Կիպրացի խումբ մը փաստաբաններ (Christina P. Sarris, Costas Valaris, եւ նախկին Ընդհ. Դատախազ Markides) ստանձնած են Նիկոսիոյ Դատարանի հրամանագրով խափանել Հ.Բ.Ը. Միութեան կողմէ ծրագրուած՝ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան փակումը եւ կալուածներու վաճառումը:

Յունիս 5, 2005-ին, վերոյիշեալ փաստաբանները Նիկոսիոյ դատարանը ներկայանալով յաջողած են ձեռք ձգել դատարանի Հրամանագիր (Injunction) որով կ'արգիլուի Մելգոնեան դպրոցը փակելու կամ վաճառելու որեւէ գործողութիւն՝ Հ.Բ.Ը.Միութեան կողմէ:

Այս մասին մանրամասն կարելի է կարդալ
www.melkonianforever.org կայքէջի վրայ:

Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ
Melkonian Alumni & Friends